«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Գնահատում
ԱՌԱՐԿԱ	Մաթեմատիկա
ՀԵՂԻՆԱԿ	Սուսաննա Մկրտչյան
ՄԱՐԶ	Արագածոտն մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գեղարոտի միջ. դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն

2. Գլուխ1. Գործնական համատեքստ

3.Գլուխ 2. 2. 1 Հետազոտական համատեքստ

4.2.2 Հետազոտության ընթացք

5.Տվյալների մշակում և վերլուծություն

6.Եզրակացություն

7. Օգտագործված գրականություն

1.Ներածություն

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատում բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:[1]

Միջնակարգ հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատումը ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Հանրակրթության ոլորտում ուսումնառության արդյունքների որակի ստուգումը պայմանականորեն բաժանվում է ներքին և արտաքին գնահատումների: Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում՝ հարցման, ուսուցողական, ստուգողական և այլ առաջադրանքների միջոցով՝ դասընկերների և ուսուցիչների հետ առօրյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով ոչ միայն գնահատում են յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքները և կարողությունները, այլ նաև նրա զարգացման ընթացքը: Արտաքին գնահատումն իրականացվում է դպրոցից դուրս՝ համապատասխան կազմակերպությունների կողմից: Արտաքին ամփոփիչ գնահատման դրական արդյունքների հիման վրա շրջանավարտին տրվում է կրթական ավարտական փաստաթուղթ՝ որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունելության մրցույթին մասնակցելու համար:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական, որոնց չափանիշները և իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է։ Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը։ Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները։ Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը։ Ուսումնական հաստատության արտաքին գնահատման նպատակը դրա գործունեության արդյունավետության գնահատումն է՝ նմանատիպ մյուս հաստատությունների համեմատությամբ։ Արտաքին գնահատման չափանիշները միասնական են բոլոր ուսումնական հաստատությունների համար։

Արտաքին գնահատումը կատարվում է ուսումնական հաստատության գիտությամբ՝ անկախ կազմակերպության կողմից։[3] Արտաքին գնահատմանը մասնակցում են ծնողները, սովորողները, կրթության պետական և տարածքային կառավարման լիազորված մարմինները, տեղական ինքնակառավարման մարմնի և ուսումնական հաստատության ներկայացուցիչները։ Ուսումնական հաստատության արտաքին գնահատումն իրականացվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության հիման վրա։ Արտաքին գնահատման ընթացքում օգտագործվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրականացրած տեսչական ստուգումների արդյունքները։ Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու՝ իրար փոխլրացնող ձևերից՝

ա) ուսուցանող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ) միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի (թեմաների) յուրացման աստիճանն ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու հաշվառելու միջոցով:

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ:

Ուսուցանող գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր հերթին ներկայացվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով, որոնք բխում են կրթակարգից:

Դրանց մի մասն առավել կիրառելի է ուսուցանող գնահատման, իսկ որոշ տեսակներ՝սովորողների ընթացիկ առաջադիմության արդյունքները պարզելու համար: [1]

Առաջադրանքների կիրառումն իրականացվում է երեք եղանակով՝ բանավոր, գրավոր և գործնական: Ստուգման միջոցները պետք է լինեն հավաստի և հուսալի:

Ընթացիկ գնահատման ձևերի ու տեսակների ամբողջական կիրառման համար որպես ժամանակային-հաշվարկային միավոր է նախատեսվում ուսումնական տարվամեկ կիսամյակը:

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական կիրառական նշանակությամբ:

Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս:

2. Գլուխ 1. Գործնական համատեքստ

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. նախագծային ամփոփիչ աշխատանք:

Միավորային գնահատման ենթակա պարտադիր աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ:

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Հանրակրթության դերը պայմանավորված է նաև նրա գործնական–կիրառական նշանակությամբ: Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին (ենթադրվում է նաև չափիչ սարքերի կամ համակարգչի կիրառություն):[2] Գործնական կարող ենք համարել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ: Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացում նախատեսվող ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքներ:

Թեմատիկ գրավոր աշխատանքը միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել բանավոր կամ գործնական: Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի նպատակն է՝ պարզել կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության

«կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մակարդակը, ինչպես նաև պարզել կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը:

Նախագծային ամփոփիչ աշխատանքը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով: Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու տնօրինությունը: [1]

Ուսուցման արդյունքների գնահատման համար ստուգվում է սովորողների

- պատրաստվածությունը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ)
- որոշվում է, թե այն ինչքանով է համապատասխանում կրթական աստիճանի ավարտին՝ առարկայական չափորոշիչով սովորողներին ներկայացվող պահանջներին, իսկ ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրագրում ամփոփված չափորոշիչային պահանջներին:

Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար սովորողներին տրվումեն առաջադրանքներ՝

- հարցեր,
- խնդիրներ,
- վարժություններ,
- գործնական աշխատանքներ, հանձնարարություններ, որոնց միջոցով բացահայտվում են.

ա. սովորողների յուրացրած գիտելիքների ամբողջությունը, կայունությունը, հիմնավորությունը, խորությունը,

բ. գիտելիքները պարզ, ոչ պարզ, բարդ, ծանոթ և անծանոթ իրադրություններում կիրառելու կարողություններն ու հմտությունները,

գ. կատարած մտավոր գործունեությունն արտահայտելու, ներկայացնելու, շարադրելու մակարդակը, որի բացահայտման համար հաշվի են առնվում նաև թույլ տրված սխալները, անճշտությունները, թերությունները և բացթողումները:

Բանավոր և գրավոր հարցումների գնահատման չափանիշներ կազմելիս հաշվի են առնվում գնահատման նպատակը, առաջադրանքի տեսակը, բովանդակությունը, դրա կատարման համար գնահատվողից ակնկալվող պատրաստվածությունը և հետևյալ սանդղակը՝

1 միավոր (շատ վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս պատրաստվածություն չի ցուցաբերում,

2 միավոր (վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,

3 միավոր (անբավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ կամ բացթողումներ,

4 միավոր (բավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

5 միավոր (միջին) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

6 միավոր (միջինից բարձր) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

7 միավոր (լավ) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

8 միավոր (շատ լավ) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,

9 միավոր (գերազանց) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ դժվարավուն բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

10 միավոր (բացառիկ) - դժվարավուն առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ա մրագրելու համարգործածության մեջ են ստուգման

- հետևյալ տեսակները՝1. բանավոր հարցում,2. գործնական աշխատանք,3. թեմատիկ գրավոր աշխատանք:

Տնային և կարճ ժամանակի համար նախատեսվող աշխատանքների միավորային գնահատումը պարտադիր չէ:

Ստուգման տեսակների բազմազանությունը նպատակ ունի տարբեր տեսանկյուններից չափել աշակերտի«գլխում եղածը», որպեսզի արդյունքում ունենանք առավել հավաստի գնահատական:«Շատ ավելի հեշտ է չափել գլխարկը, քան գլխում եղածը»:
«Գլխում եղածը» չափելը ոչ թե ֆիզիկական, այլ փսիխոմետրիկ չափում է:[2] Այդ չափման արդյունքի հավաստիությունը կախված է տարբեր տեսանկյուններով չափումների քանակից. որքան շատ լինեն չափումների տեսակները, այնքան հուսալի ու հավաստի կլինեն ե զրակացությունները: Ուսումնական գործընթացում ստուգման տեսակների քանակը որոշվում է՝ ելնելով առարկայական դաշտում դրանց իրագործելիության հնարավորություններից:

Ժամանակի ընթացքում ստուգման պարտադիր տեսակները կարող են փոփոխվել՝ ավելանալ կամ պակասել:Ստուգման յուրաքանչյուր տեսակ իր կիրառման ընդհանուր ծավալով պետք է ընդգրկի տվյալ առարկայի՝գնահատման ենթակա կիսամյակային ամբողջ ուսումնական ծրագրային նյութը և դրան բնորոշ կրթության բովանդակային բաղադրիչները: Մեկ կիսամյակում ստուգման յուրաքանչյուր տեսակի կիրառման հաճախականությունը որոշելու նպատակով ծրագրային նյութը բաժանվում է մասերի, որոնք կոչվում ենթեմաներ:Միավորային գնահատման նպատակով կարելի է (ոչ պարտադիր) օգտագործել կարճաժամկետ թեմատիկ աշխատանքներ, ինչպես նաև տնային առաջադրանքները՝ որպես բանավոր հարցումներ:Միավորային գնահատման ենթակա պարտադիր աշխատանքից բացակայած սովորողի համար նշանակվում է այն հանձնելու նոր ժամկետ:[1] Տարբեր բաղադրիչներով միավորային գնահատումն օգնում է առավել ամբողջական պատկերացում կազմել սովորողի մասին: Դրանով բացահայտվում են վերջինիս՝ տարբեր կարողությունների և հմտությունների տիրապետման աստիճանները: Այդ համապատկերում սովորողին պարզ են դառնում նրա գործունեության հաջողված և թերի կողմերը: Դա հնարավորություն է ընձեռում սեփական թերությունները վերացնել, ինչպես նաև ճիշտ կողմնորոշվել ապագա մասնագիտություն ընտրելիս:Միավորային գնահատումն աշակերտի ուսումնական ձեռքբերումների նիշային կամ թվային արտահայտությունն է, որի միջոցով պատկերացում է կազմվում կրթական պահանջներին աշակերտի համապատասխանության աստիճանի մասին:Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու նպատակով գործածության երաշխավորվող չորս տեսակներից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի,

դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային համակարգը: Համընդգրկուն ուսումնառությունը ենթադրում է մարդու կենսագործունեության շրջանակի ընդլայնում ուսումնառության միջոցով, ընդ որում՝ ոչ միայն մասնագիտական հմտությունների ձեռքբերման, այլև կենսական կարևորություն ունեցող կամ պարզապես մարդուն հետաքրքրող կարողությունների ձեռքբերման միջոցով: Ընդ որում՝ այդ ուսումնառությունը չպետք է սահմանափակվի միայն նոր գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերման հնարավորություններով: Համընդգրկուն ուսումնառության շրջանակներում պետք է ճանաչվեն կրթության և ուսումնառության բոլոր ձևերն ու եղանակները՝ ընդգրկված լինելով մեկ ճկուն համակարգի մեջ, որտեղ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությամբ ձեռք բերված գիտելիքների ճանաչումը հավասարապես արժեքավոր և հավասարազոր է: Եթե ուսումնառությունը «համընդգրկուն» է, ապա դրա կազմակերպման, կանոնակարգման, ֆինանսավորման և այլ հարցերը պետք է լինեն ինչպես կրթական այնպես էլ տնտեսական, երիտասարդական, սոցիալ-մշակութային, առողջապահության և զբաղվածության ոլորտները տնօրինող պետական և թե՛ ոչ պետական կառույցների իրավասությունների շրջանակներում: Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալուղղություններով. բանավոր խոսք, վերարտադրություն, հաղորդակցություն, համագործակցություն, լեզվամտածողություն, գիտելիքի յուրացում, տրամաբանություն, ստեղծագործական մտածողություն, ուսումնական գործունեություն ցուցաբերելու (մոդելավորելու)կարողություններ:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել՝

- առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով, աշակերտներին ուղղված բանավոր հարցերի միջոցով,
- տնային աշխատանքների ստուգմամբ,
- համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Բանավոր հարցումը կարելի է գնահատել հետևյալ հիմնական չափանիշներով.

1. ակադեմիական գիտելիքի իմացություն,
2. կիրառելու կարողություն,

3. ներկայացնելու կարողություն,
4. ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու կարողություն,
5. միջառարկայական կապեր տեսնելու կարողություն:

3. Գլուխ 2. Հետազոտական համատեքստ

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից՝ մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանընպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը՝միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,

դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիությունը
- հիմնավորվածությունը
- մատչելիությունը
- թափանցիկությունը:

4.2.2.Հետազոտության ընթացք

Կարևոր են ուսուցչի արդյունավետ աշխատանքի պարամետրերը: Դրանք են.

Սպասելիքների բարձր մակարդակ .ուսուցիչը աշակերտից սպասում է հաջողություններ և դրական փոփոխություններ վարքում,

Անձնական պատասխանատվություն.ուսուցիչը պատրաստ է պատասխանատվություն կրել աշակերտների հաջողությունների և սեփական աշխատանքի որակի համար,

Կարևորության գիտակցում.ուսուցիչը հավատում է, որ իր աշխատանքը ունի իմաստ ու նշանակություն,

Պլանավորած ռազմավարություն.նախագծում է ուսումնական գործընթացը,նշում է նպատակներն ու ընտրում լավագույն միջոցները ու հնարներ՝ դրանց հասնելու համար:

- Դրական դիրքորոշում.ուսումնական գործընթացը և շփումը աշակերտների հետ ուսուցչին բավարարվածություն է պատճառում:
- Իրադրության տիրապետում.ուսուցիչը աշխատանքում կարող է ազդել իր աշակերտների ակադեմիական հաջողությունների վրա:
- Նպատակի ընդհանրացում.ուսուցիչը և աշակերտները միասին աշխատում են միևնույն նպատակին հասնելու համար:
- Ժողորդավարական սկզբունքներով որոշումների ընդունում. Ուսուցիչն ընդգրկում է աշակերտներին նպատակների և դրանց հասնելու միջոցների ընտրության գործընթացում:

Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում: Համընդհանուր կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

Բանավոր հարցումը գնահատման մի տեսակ է, որի ժամանակ աշակերտը բանավոր խոս քով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը՝ դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման

ընդունակությունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Այն ավելի ամբողջական պատկերացում է տալիս աշակերտի մտավոր կարողությունների, գիտելիքների յուրացման, լեզվամտածողության, վերարտադրելու և ստեղծագործական կարողությունների մասին:

5.Տվյալների մշակում և վերլուծություն

Որոշ ուսուցիչներ այդ գնահատականը օգտագործում են կարգապահություն ամրապնդելու համար: Դասից ուշացողին, դասագիրք, գրենական պիտույք չունեցողին, դասից փախչողին, դասը խանգարողին նշանակում են «2» երևույթը, որը ոչ մի կերպ չի կարող տեղավորվել մանկավարժության շրջանակներում:Ժամանակակից առանձին հոգեբաններ և մանկավարժ գիտնականներ առաջարկում են սովորողների ուսման առաջադիմության գնահատման համար բալային համակարգեր ստեղծել ըստ ուսումնական առարկաների և հրաժարվել գործող միասնական համակարգից:Այսպիսի միտումը սխալ է, քանզի այդ դեպքում կառաջանան վիթխարի խնդիրներ, որոնք կխանգարեն և ուսուցիչներին, և աշակերտներին: Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատում բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

ՈՒսումնառության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում հիմնականում հիմնված է ֆորմալ կրթության համակարգի վրա, որը ներառում է՝

- հանրակրթությունը,
- նախնական և միջին մասնագիտական կրթությունը,
- բարձրագույն կրթությունը,
- հետբուհական կրթությունը:

Միաժամանակ, յուրաքանչյուր վերոնշյալ կրթական մակարդակի համար «Կրթության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նաև լրացուցիչ կրթություն։ Սակայն մեր ուսումնառության համակարգի կարևորագույն բաղադրիչներից է նաև գործազուրկների՝ ոչ ֆորմալ հանդիսացող, մասնագիտական ուսուցումը, որը կարգավորվում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀօրենքով (2005 թ.)։

Ոչ ֆորմալ կրթության օրինակներ են՝

- կազմակերպություններում աշխատողների համար իրականացվող վերապատրաստմանն որակավորման բարձրացման դասընթացները.
- Մասնագիտական ու ոչ մասնագիտական ուսուցման դասընթացները, որոնք իրականացվում են ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային

կազմակերպություններում, այդ թվում՝ պետական ուսումնական հաստատություններում.

- տարբեր միջազգային կազմակերպությունների ու ծրագրերի կողմից իրականացվող թիրախային դասընթացները, այդ թվում՝ բարեգործական բնույթի.

Տարաբնույթ նախապատրաստական դասընթացները, այդ թվում՝մասնավորկրկնուսույցների գործունեությունը։

6. Եզրակացություն

Կրթական գնահատումը գիտելիքների վերաբերյալ էմպիրիկ տվյալների փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է:: Գնահատման տվյալները կարող են ստացվել սովորողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից: ՈՒսումնառության արդյունքների ձեռքբերումը գնահատելու համար կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ:

Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով: Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող համայնքի (դասարան, սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ), դասընթացի, ակադեմիական ծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա: Գնահատումը սովորողի մասին քանակական և որակական տվյալների հավաքագրումը, համադրումը և մեկնաբանումն է: Ինչի համար է գնահատումը: Երեխայի հմտությունների և ունակությունների օբյեկտիվ գնահատումը պետք է նրա ուժեղ կողմերը , հմտություններն և ունակությունները բացահայտելու համար, լրացուցիչ օգնության կարիք ունեցող կողմերը բացահայտելու համար, երեխայի համար համապատասխան ուսումնառություն պլանավորելու համար, ոչ թե պարզապես “պիտակավորելու” նպատակով: Նախնական գնահատում Ուսման դժվարություններ ունեցող սովորողի ներառական կրթությունը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնական գործընթացում նրան դիտել և գնահատել որպես անհատ՝ իր ընդունակություններով, կարողություններով, հետաքրքրություններով ու կարիքներով: Սովորողի հնարավորությունների և կարիքների գնահատումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու համար: Գնահատումը, դիտարկումը սովորողի զարգացման տարբեր փուլերում նրա մասին բազմաբնույթ տեղեկությունների հավաքման, համակարգման և եզրահանգումների գործընթաց է: Գնահատմամբ բացահայտվում է չափորոշչով նախատեսված կարողությունների, հմտությունների և գիտելիքների յուրացման աստիճանը: Գնահատման և դիտարկման նպատակն է սովորողի ուսուցումը դարձնել առավել արդյունավետ ու կողմնորոշված՝ նրա կարողություններին, հնարավորություններին

համապատասխան: Գնահատումը պետք է իրականացվի սովորողի համար հնարավորինս սովորական պայմաններում և հնարավորություն ընձեռի նրան դրսևորել իր ներուժը և արտահայտել գիտելիքները: Գնահատումը իրականացվում է 10-միավորային սանդղակով:Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական ՝գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային: Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է սկսած երրորդ դասարանից: Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռնում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքնում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ: Ձևավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում:

Թեև ՀՀ-ում արդեն շուրջ երեք տարի է, ինչ աշխատանքներ են տարվում Որակավորումների ազգային շրջանակ մշակելու ու ներդնելու ուղղությամբ, սակայն վերջինս դեռևս բացակայում է, իսկ երկրի աշխատաշուկայում գոյություն ունեցող զբաղմունքների նկարագրերը և կրթական համակարգի շրջանավարտների որակավորումների բնութագրերը լիարժեք չեն բավարարում միջազգային, և հատկապես եվրոպական, պահանջներին: Դրանք միանշանակ չեն կարող հիմք հանդիսանալ որակավորումների փոխճանաչման համար, քանի որ այս որակավորումների՝ գիտելիքների և հմտությունների նկատմամբ պահանջները ամրագրված չեն որևէ օրենքում, իրավական ակտերում կամ մեթոդաբանական փաստաթղթում և պայմանավորված չեն աշխատաշուկայի պահանջարկով:

Այսպիսի իրավիճակը հանգեցնում է անորոշության՝ կապված մասնագիտական ուսուցման պահանջների հետ, ինչպես նաև կրթության ցածր մակարդակի, որը ամբողջությամբ չի բավարարում աշխատաշուկայի պահանջարկը և խոչընդոտում է զբաղվածության մակարդակի աճը և առհասարակ տնտեսական զարգացումը։

7. Օգտագործված գրականության

1. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
3. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ 2005Թ